



ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Նոր Բաղդադի պատկերազարդ, Ֆրանսահայ
երկու հաստ՝ 1874 մեծադիր երեսներով:

Ազգ. — Մատենագիրն փափաքելով որ իր երկասի-
րութիւնն մատչելի եւ օգտակար ըլլայ բոլոր Ազգին, մա-
նաւանդ որ իւր նպատակն է ամենեւին չլաճիլ, այլ վնա-
սով իսկ վաճառել, որոշած է որ սոյն երկու հաստներն
ըլ ի միասին 25 ֆրանքէն աւելի չարժեն:

Դիմել հեղինակին հետեւեալ հասցեով.

M. G. DE LUSIGNAN

108. Neuilly-sur-Sein. — France

Յանձնարարութիւնք կանխիկ վճարմամբ:

ԱԶԳԱՅԻՆ

Տարեգլուխը, որ տարին ամբողջ չխնդա-
ցողներուն համար իսկ օր մը և առիթ մըն է
ուրախութեան, շատ մը ընտանիքներու համար
լսեցինք որ տրտմութեան օր մը եղած է քա-
ղաքի մէջ. Պատճառը, տեղական անմիտ սովո-
րութեան մը համեմատ, տարեգլխուն երկու օր
բաղդախաղի թոյլատրուիլն է արձակ համարձակ
եւ մենք, հայերս, որ ամեն բանի ընդունակ և
բիւրաւ հետեւող ենք (բաց ի Եւրոպական ազա-
նամատութեան), ի հարկէ մեզմէ շատեր ետ պի-

տի չմնային ուրիշ ազգերէն այս առթիւ ալ. և
ահա շատ մը ընտանիքի տէրեր փոխանակ իրենց
զաւկները ուրախացնելու, այդ օրը կը բազմին
խաղի սեղաններու շուրջը, կը կորսնցունեն ինչ
որ ունէին և ձեռնունայն տուն կը դառնան,
ինքզինքնին յուսահատութեան և ընտանիքնին
տիրութեան մատնած:

Կը լսենք թէ մեծ բարեկենդանին ալ միե-
նոյն սովորութիւնը ի գործ կը դրուի եղեր այս
տեղ. կը յորդորենք մեր տղապիտները որ օ-
րինակ առնեն այս եղելութենէն ու չփորձուին
նորէն միեւնոյն տխուր փորձառութեան ենթար-
կելու ինքզինքնին:

Հետեւեալ հատուածը կը քաղենք չըջաբե-
րականէ մը զոր Գահիրէի եկեղեցւոյ Հոգաբար-
ձութիւնը Երուսղէի առթիւ զրկած է Գահիրէ-
արնակ ազգայնոց:

Հոգաբարձութիւնս նկատելով որ տեղւոյս
Ս. Աստուածածին եկեղեցին որ և է հաստա-
տուն եկամուտ գրեթէ չունի և որու հետեա-
նօք բոլոր անօթք և սպասք ինչպէս նաև շուր-
ջառներն ու չապիկներն մաշած, պատառոտած
նոյն իսկ անգործածելի վիճակի մէջ կը գըտ-
նուին, ու այս բոլոր պէտքերու հոգացումը
բաւական գումարի մը կը կարօտի, այսու մաս-
նաւորապէս կը դիմէ Ձեր Ազնուութեան խն-
դրելով որ իւզազնի մասնակցիլ բարեհաճիք
Ձեր կամաւոր առատ նուէրով:

Հայաստանի մէջ թուրքերէն ու քիւրտերէն
թալանի մատնուած եկեղեցիի մը հոգաբարձու-

թեան կողմէ գրուած է կարծես այս շրջաբերականը: Ո՛վ կրնայ երեւակայել թէ արտասահմանի է՛ն հարուստ այն է եգիպտոսի մայրաքաղաքի Ս. Աստուածածին եկեղեցիի հոգաբարձութեան շրջաբերականն է այդ. եկեղեցիի մը որուն հարստութիւնը արեւի պէս յայտնի է ամէնուն:

Ժողովուրդի միամտութենէն այս աստիճան անճարակ կերպով օգտուիլ փորձող հոգաբարձութենէն պիտի խնդրէինք որ քիչ մը խելք ու պատկառանք ունենար և պարզ իւղազին մը ժողովուրդը նպատակով ատանկ մտացածին պատրուակներու չդիմէր:

Ժողովուրդը վարժուած է. իր նուէրները միշտ կուտայ առատօրէն, հոգ չէ թէ եկեղեցին կարօտ չըլլայ:

Այս շրջաբերականը աւելի կասկածի կ'ենթարկէ ժողովուրդը քան թէ ի գութ շարժելու:

—Երուսաղէմայ խնդիրը կարգադրելու համար Կրօնական Ժողովոյ դեր-ատենապետ Վահրամ Սրբազան Մանկունի և Քաղ. Ժողովոյ ատենապետ Տիգրան էֆ. Երուսաղէմի Խառն Ժողովոյ որոշմամբ Երուսաղէմ պիտի երթան:

«Ամուսնաշուծութիւն եւ կրկնամուսնութիւն. այս է ժամանակէ մը ի վեր Քահիրէի ազգայնոց խօսելանիւթը: Պատմութիւն նայելով, Հայ-Հռովմէական մը իր եկեղեցիին միջոցաւ ամուսնաւոր ծուկէն ետքը (1), էջմիածնական եկեղեցւոյ միջոցաւ նոր ամուսնութիւն մը կնքեր է ուրիշ կնոջ մը հետ, եթէ չենք սխալիր, այս երկու եկեղեցիներն ալ ո՛չ ամուսնաւորութիւն կրնան կատարել եւ ոչ կրկնամուսնութիւն, առանց իրենց Քահանայապետներուն մասնաւոր արտօնութեան: Եկեղեցականներուն առաջին պարտականութիւնն է ժողովուրդը չգայթակղեցնել, եւ այս պարագային մէջ անհրաժեշտ է՝ յուզուած միտքերը խաղաղելու համար՝ Հայրապետական արտօնագիրերը երեւան հանել և կամ եզրուութիւնը լուսաբանել: Զայս կ'սպասենք Եգիպտոս հայոց Սապազեան և Այվազեան Սրբազան Առաջնորդներուն բարեհաճութենէն»:

Ժողովուրդ

(1) Մեր ստացած տեղեկութիւններուն նայելով, Հռովմէական եկեղեցին լուծած չէ՛, այլ որոշած է որ առժամեայ կերպով երկու ամուսինները պատկենակցին, Այվազեան Սրբազան այս «առժամեայ կերպով զատ կենակցիլ»-ը լուծուած հաւկցած ըլլալու է որ կրկնամուսնութիւնը կատարած է:

(Մ. Հ.)

—Երեքշաբթի օրը Մէսսաթուրի Բօրքուզայ շոգենաւով տեղա ժամանեց Նանսիի երկրագործական վարժարանի շրջանաւարտներէն Տիար Միք. Նաթանեան, հանդերձ ընտանեօք:

ԱԶԴ

Մեր կամքէն անկախ պատճառով մը ներկայ համարը այսօր (կիրակի) հրատարակուեցաւ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Թոքիոյէն կը ծանուցուի որ Քօրէաի դահլիճը ճարտնի կողմնակից է:

—Բօրթ—Արթիւրէն կը հեռագրեն թէ՛ Փեքինի Ամերիկեան դեսպանատան ուռանդ—Ժարգմանները պիտի ղրկուին Մանչուրիոյ Մուկտալնի և Անթունկ քաղաքները, փոխ—հիւպատոսի պաշտօնով:

—Բեդրսպուրկէ յունվար 28 թուականով կը դրեն թէ ռուսական Ա. պահեստի գունդերը և Խարքօի, Բիէվի ու Օտեսայի բանակներէն 86,000 հոգի հրաման ստացած են առաջին նշանին պատրաստ ըլլալու:

Հաւատեղեակ շրջանակներու մէջ կը յայտարարուի թէ՛ բանակցութիւնները անյարգելի ատիճանի մը հասած են ու բոլոր դիւանագիտական ջանքերն ապարդիւն կը մնան, որովհետեւ թէ՛ ճաբոն և թէ՛ Ռուսիա իրարու վրայ վստահութիւն չունին. երկուքն ալ դժուարաւ գործադրելի երաշխաւորութիւններ կառաջարկեն, օրինակի համար Ռուսիա կը պահանջէ որ Քօրէայի հարաւային եզերքը ամբողջութեամբ չի շինուին, միւս կողմէ ճաբոն ալ չուզեր որ Մանչուրիոյ մէջ Չինաստանի գերիշխանութիւնը սեղմուի, ու կը պահանջէ որ Քօրէաի մէջ իր զերակշուութիւնը ճանչցուի:

—Սօֆիայէն կը դրեն թէ Աւստրո—Ռուսական բարենորոգումները գործադրելու մէջ արգելքներ կը յարուցուին Դրան կողմէ, և թէ յառաջիկայ դարնան Մակեդոնական ընդհանուր ապստամբութիւնը անխուսափելի կը դառնայ:

—Պէլկրատէ կը ծանուցուի որ Սերպիա բողոքած է թուրք զօրքերուն Հին Սերպիոյ սահմանագիւղները համախմբուելուն դէմ. բայց Դուռը պատասխանած է որ ինք ստիպուած է այդպէս վարուիլ. Սերպո—Մակեդոնական հրոսախմբումն յառաջխաղացութիւնը արգիլելու համար:

Սերպ կառավարութիւնը շատ համակիր է մակեդոնական շարժումներուն:

—Բեդրսպուրկէ կը հեռագրեն թէ Ռուսիա որոշած է ձարոնի վերջին ծանուցագրին տըրուելիք պատասխանը քանի մը օր ևս ուշացնել, որովհետև Ձարը կը փափագի որ հաստատուն և տեւական կարգադրութեան մը յանգին բանակցութիւնները, հետեաքար, տրուելիք պատասխանը խմբագրուելէ առաջ դիւանագիտական, զինուորական և վարչական ժողովներու մանրակրկիտ բովէն պիտի անցնի:

—Բորթ Արթիւրէն կը ծանուցուի որ Ռուսկոյան նաւատորմի շաւահանգստէն դուրս ելած է (նաւահանգիստը նեղ ըլլալուն պատճառաւ) ու բացը խարիսխ ձգելով կազմ և պատրաստ կը գտնուի ամեն պատահականութեան դէմ:

ՈՎ Է ՑՆՈՐԱՄԻՏԸ

«Ապուշութիւնը սահման մը ունի, ցնորաւ միտ գրաշարները թող չքննադատեն Հիւսկոները»:

Ազատ Բեմ Թիւ 32

Այս տողերը գրողը տալանդաւոր մէկը ըլլալու է, որովհետև ոչ միայն իր այլ եւ ժողովուրդի մը հոգեբանական վիճակը պատկերացուցած է այդ երկու տողին մէջ:

Դիտած էք որ մեր մէջ ամենէն քիչ յեղցեղութեամբ բանը մտքի անկախութիւնն է: Պատճառը պարզ է, որովհետև ամենէն քիչ փոյթ ըրած բաներնիս այդ է, վարժուած ըլլալով միայն հետեւելու, հպատակելու որքան քաղաքական նոյնքան մտաւորական աշխարհին մէջ: Այլեւս անիմաստ օտարոտի բան մըն է դարձած մեզ համար մտաւորական ազատութիւնը: Կը զարմանանք տեսնելով ու և է գաղափար կամ տեսութիւն որ անկախ մտքի մը նշանները կը կրէ: Շատ բնական երևոյթ մըն է ասիկա մեզի պէս նիւթապէս ու բարոյապէս գերութեան վարժուած ժողովուրդի մը մէջ: Մեծութեան, անունի, տիտղոսի առջեւ այնքան յափշտակուած, այնքան խոնարհած ենք որ արժանիքը միմիայն արտաքինին մէջ փնտռելու վարժուած ենք: «Արհեստաւոր մարդ մը ի՞նչ կրնայ գիտնալ, բան գիտցող մարդը սանկ կ'ամ պանքայի պաշտօնեայ, կ'ամ վաճառական, կ'ամ պէյ, կ'ամ փաշա, կ'ամ գօնթ, կ'ամ մարքիզ մը ըլլալու է. գրաշարին մնաց Հիւսկոն քննադատել. գիրդարէ, ապուշ»: Ահա՛ հայկական դատողութիւնը: Բայց իրաւունք ունին, իրաւ, արհեստաւորներէն ելած են Եւրոպայի պարծանքը եղողներէ շատեր, իրաւ, պարզ զինուոր մըն էր որ

մեծ աշխարհակալ մը դարձաւ, իրաւ, գրաշար մըն էր Ֆրանքլին, իրաւ, դերասան մըն էր Շէյքսպիր, քայց անոնք հայ չեին ա՛: Ի՞նչպէս իրաւունք չտալ այս տեսակ տրամաբանութեան: Կարծես Հայը դատապարտուած ըլլար յաւիտեան ստրկական գաղափարներով առաջնորդուելու: Եթէ քաղաքական աշխարհին մէջ ազատինք անոր ազդեցութենէն, մտաւորական աշխարհին մէջ անկէ պիտի բռնուինք: Ժամանակ մը հայը հայուն կ'ապտակեր համարձակած ըլլալուն համար թուրք պաշտօնէի մը դէմ ելլելու, «էֆէնտի է ծօ՛, սուս եղիր...» ըսելով: Հիմա հայը հայուն կը նախատէ համարձակած ըլլալուն համար եւրոպացի հեղինակ մը քննադատելու: Միեւնոյն ստրկական ոգին, միեւնոյն հոգեբանական վիճակը...

—Ինչո՞ւ համար ցնորամիտ կըլլամ ըսելով թէ Հիւսկոն մէկ գրութենէն բան մը չեմ հասկըցած, ցնորամիտ է մարդ մը երբ կըսէ բժիշկին, «տուած դեղերէդ բան մը չը հասկցայ»:

Եթէ ըսել կուզեն թէ Հիւսկո մը քննադատելու համար Հիւսկո մը ըլլալու է մարդ, կը հետեւի ուրեմն թէ միայն Ձարերը պէտք է քննադատեն Ձարերը, միայն հարուստները պէտք է քննադատեն հարուստները, և այս տրամաբանութեամբ կը հետեւի թէ ոչ ոք իր արհեստէն դուրս բանի մը վրայ կարծիք յայտնելու չէ, հետեապէս Հիւսկո միայն գրականութեան վրայ դրելու և անկէ դուրս բան մը խառնելու չէր: Կը տեսնէք թէ եթէ աշխարհ մեր դաւիթներուն խելքովը կառավարուէր ի՞նչ քօնաժողով աշխարհ մը պիտի ըլլար... Եւ սակայն բանը այդպէս չէ Եւրոպայի ու Ամերիկայի մէջ:

Մտքի այդ աշխարհներուն մէջ տէր եւ ծառայ, իշխանութիւն եւ հպատակութիւն չկայ: Հոն ամեն միտք հաւասար իրաւունք կը վայելէ: Հոն արհեստը կամ պաշտօնը չէ՛ որ կը ճշդէ մէկու մը արժանիքը, Հոն գրաշարին չեն ըսեր, «դուն սուս եղիր», և դատարանի մէկ զօրիստին չեն դառնար ըսելով «դուն խօսէ»: Հոն պաշտօնը մեծութեան հոմանիշ չէ, Հոն արհեստը նախատողը անպատիւ մարդ մըն է, Հոն ուրիշները արհամարհողն է միայն որ վերջին բառը ըսած է և վերջին բարեւ տուած է յառաջդիմութեան ու զարգացման:

Ցնորամիտը, ապուշը ո՞ն է որ մտաց աշխարհին մէջ առանձնաշնորհութիւն և մենավաճառութիւն կ'երեւակայէ:

Ս. ՄՈՒՐՍԵԱՆ

ԻՃԽԱՆԱՑ ԿԱՐԿԱՆԴԱԿԸ

Յիսուս Մանուկին այցելող երեք մոգերու յիշատակը փորելենդանական խրախճանութիւնով մը կը կատարուի ամբողջ կաթոլիկ աշխարհի, մանաւանդ Ֆրանսայի մէջ, Ծնունդի հաւեղէններով, կաղանդի անուշեղէններով յափառեցած ստամոքսները կը փորձեն մի քիչ խմորեղէններով քերելոցնել, Յունուար 6ի այս տօնին, Գաղիական ճաշակը չափազանց զանազանութիւնը կը սիրէ. անոր համար հարուստ խոհանոց և ճոխ սեղանի մը հարկն զգացած, ու յաջողած իսկ է:

Այս երկրին մէջ թէ՛ եկեղեցիի, թէ՛ ազգային տօներն ընտանեկան և ընդհանրական հաւաքումներով կը մեկնուին, Ծնունդի և մոգերու տօնին հանդիսաւոր պատարագներ կը մատուցուին, և է՛ն համբաւաւոր քարոզիչները կը խօսին բեմէն. բոլոր եկեղեցիներու աթոռները բռնուած են, եթէ բարեպաշտութիւնը պահ մը նուազած են թաղերէնք, երաժշտութեան սիրողներու թիւն այնքան շատցած է որ գունդ գունդ եկեղեցին շտապողներու լէզէնը պատկառելի թիւ մը կուտայ, որք քարոզ խօսող քահանային աստուածաբանութիւններուն անտարբեր, մեծ—դաշնակն ունկնդրելու կուգան, Մանուկներ ու աղջիկներ են նուագին ձայն խառնողները, Քահանան ի զուր մսուրի կեանքը կը պատմէ, «Մոգերը կուգան, և Աստուծոյ իրենց ամենէն թանկագին գանձերը կը նուիրեն, ոսկի, կնդրուկ և զմուռ»:

Ի զուր կը հրաւիրէ ձօնել Աստուծոյ մեր ամենէն ընդունելի նուէրներն. հալորդութիւնով արդարացած խիղճ մը, մաքրուած սիրտ մը, հոգի մը սրբացած ազնուացած:

Մեծ ու պզտիկ քարոզի լմնալուն անհամբեր են:

«Իշխաններու կարկանդակն» ապսպրուած է. Բաթիստի աշակերտը հասցէի կարգաւ կանուխէն կ'սկսի ցրուել ֆոլանսներն:

Առհասարակ մէկ քիլօնոց օղակաձև կարկանդակ մ'է. հաւկիթով ու կարագով ևլն. շաղուած, ու երեսը հատիկ հատիկ չաքար ցանուած. ծաղաքարն անոր անծանօթ մէկ անկիւնը պահ դրած է բակլայ մը (ֆէլ):

Ահա՛ բուն գաղտնիքը, ամէնու յոյսն է այդ, ո՛չ միայն պզտիկներու, հապա բոլոր տղանցիներու աչքը խմորեղէնի զամբիւղին մէջն է:

Սեղանէն վերջ, տան մեծը հաւասար կտորներու ևր ռափէ, ու հոն եղողները կը հրաւիրէ

Մեծ ու պզտիկ կ'երկնան, բերնի մուշիկ շարժուածքով, անձայն, անհամբերութեան ժըպիտով ակնարկներն իրարու լարուած: Յանկարծ վայրկեանակտն լուծիւնը կը խզուի. «աւաւիկ քակրան» ներկաները ծափերով՝ «աւաւիկ իշխանը» կը պատասխանեն: Երիտասարդն այն օրուան իշխանն է, ու կը հրաւրուի իր իշխանուհին ընտրել. — Վարանումը ըստէնցէ մը յետ, ձեռք կուտայ իր սրտի սիրածին, զեղեցիկին... և համբոյր մը, տաքուկ համբոյր մը՝ իշխանուհիին տաքցած այտին, թե թեի մտած ընդարձակ սրահը ման կուգան, արժանի յարգանքով կ'ողջունուին, կարգաւ կը շնորհաւորեն զոյգը, և իշխանն եղած այս անհամեմատ յարգանքին փոխարէն կը հրամայէ օշարակներով, զանազան ըվպելիներով մեծարել իրենները: Ամէն անմեղ ու ներելի խաղեր, զուարճութիւններ իրարու կը յաջորդեն. մինչև իրիկուն կը տեսն:

Այս միօրեայ իշխանութիւնն օգտակար, շքեղ հանդիսացնելու ամէն ճիգեր կ'ընեն, Կը մեծարեն իրենց շուրջը գտնուողներն ու կը փառաւորուին:

Իշխան եղողը գանձէն (անձնական քսակ) պարտաւոր է վճարել հրամցուած ըմպելիքներու գինն, և երեկոյեան կարկանդակը, քաղիստի:

Այս ծախքերէն խուսափողներ բակլան կուլ կուտան երբեմն:

Իշխանը կարկանդակի մէջէն ելած ու իրեն նուիրուած քակրան կը մաքրէ ու կը պահէ ի յիշատակ այս հանդէսին. եթէ գտնողն աղջիկ կամ կին մը ըլլայ, իր իշխանը կ'ընտրէ:

Կաղանդին և Կարկանդակի տօնին (Ծնունդ) հացադործներն իրենց բոլոր յաճախորդները կարկանդակներով կը կաղնտեն, իւղով, հաւկիթով ու կաթով պատրաստուած, ու ծալծալ բացուած տափակ խմորեղէններով, ևլն:

Իշխաններու կարկանդակը օրհնուած հացի նշանակ է, նոյն իսկ գիւղական ժողովուրդին եկեղեցիի մէջ այդ օր կը բաժնուի օրհնուած հաց, և շատ տեղեր տուններու մէջ օրհնուած հացի նըման բարակ խմորեղէններով կը զարդարեն սեղանը. պարզապէս սովորութիւն մ'է, ինչպէս Զատիկին կարմիր հաւկիթ, Ծնունդին հաւեղէններ, և ոտորէ, խզունջ ևայլն. Թարգմ.

ՎԱՀԱՆ ՄՈՄՃԵԱՆ

Գահիրէ Ապտինի գարագօլին դէմը, Սփինքս դեղարանին կից, և Շարա Մոհամէտ Ալի, Աթըֆէթ—էլ—Էնէպա, թիւ 1

Կը պատրաստէ ոսկիե եւ արծաթե զարդանկար (միւնէի) եւ դրուագեալ գաւազաններ:

ԱՐՅԵՍՏԸ

Ամեն հոգի, ամեն անհաս
Եթե ունի արհեստ, ուսում,
Նա չի չինիջ սնանկ, աղքատ
Վսանգայից մեր աշխարհում.

Արհեստն է որ աղքատի պես
Միշտ բղիտում է, միշտ ծղծղում,
Թեպես եւ մերթ նստադում է,
Բայց գիտովին չի ցանախում.

Լոյս

Ղ. Աղայեան

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

ԾԱՆԾԱՂԱՄԻՏ ՄԸ

Դա՞՞ք Սանդրալի պարտեզին մէջ.

— Մի՛սաք, երէկ գիշեր ո՛ւր էիք.

— Կարճ—Օհանեսն սուսուկէին գացինք, բայց
անանկ աղւոր ժամանակ մը անցուցինք, անանկ
աղւոր ժամանակ մը անցուցինք որ՝ չեմ կրնար
պատմել. մէկ աչքդ կոյր, կրնակդ ալ կուզիկ մը
աւնենալու ու հոն գտնուելու էիր.

— Ճանչուր ընտանիքի երէն որո՞նք կային.

— (Բուն անուններն տալով) Այսինչենք, այն-
ինչենք, ինքենք, մինքենք ամէնքն ալ հոն
էին. Ես օրիսրդ Կարճ—Օհանեսանցիհետ էն ա-
ռաջ վայց մը դարձայ, խաղին տաք միջոցին՝
«արևդ սիրեմ, աղւոր տղայ ես» ըսաւ ինծի:
Այ ոտքս դետնէն կտրեցաւ ու կէս ժամէ աւելի
հետը դարձայ.

— Տօպաճի պէս, անանկ չէ՞.

— Չեմ գիտեր, տօպաճի՞ թէ մախառախ պէս,
յետոյ, քովի պզտիկ սենեակի գացինք ուր ա-
մեն տեսակ մեղքներով սեղան մը շտկուած էր,
և մէյմէկ քօնեաք խմեցինք նոր գրութեամբ.

— Նոր գրութիւնը ո՞րն է.

— Ես իմ գաւաթս կէս մը կը խմեմ անոր
կուտամ, ան ալ՝ իր գաւաթը կէս մը կը խմէ
ինծի կուտայ.

— Ի՞նչ կը նշանակէ ատիկա.

— Մէկ սիրտ մէկ հոգի ըլլալ.

— Ձարմանալի բան. նոր կիմանամ կոր.

— Ինչո՞ւ կը զարմանաս, ամէն բանի պէս,

սեռահասարակական հարցերի մասին.

նալու է.

— Անանկ է.

— Աստիկն ալ մինչեւ վերջը Մառիին հետ
էր. խնդրտ Սեպուխօֆէն ի՞նչ կը յուսաս. պզ-
տիկ Գաւաթէնի քովէն վայրկեան մը չի հեռացաւ.
Վաթկիւթ աղջիկը քատրիի շէն տէ տալնետու մի-
ջոցին, անանկ մը ձեռքերս կը սեղմէր, անանկ
բաներ կընէր որ չեմ կրնար պատմել. է՛հ, ի՞նչ
պիտի ըլլայ. կըսեն թէ ժամանակաւ անոր մայ-
րիկն ալ անանկ է եղեր.

— Ես ալ անանկ իմացած եմ.

— Առջի գիշեր ալ Ֆիլիֆիւաններուն սուս-
ուէին գացեր էինք. հոն ալ շատ սքանչելի ժա-
մանակ անցուցինք. պահ մը պազարաւ ալ խաղա-
ցինք. այն միջոցին սեղանին տակէն ոտքս եր-
կնցուցի և Տիկին Ֆիլիֆիւի ոտքին վրայ դնե-
լով բաւական զբօսեցանք. Հէ՛մ քեզի բան մը
ըսեմ. տիկինը ամենեւին սէր չունի էրկանը
վրայ.

— Ի՞նչէն հասկցար.

— Ես հասկցայ. բայց մարդու բան մի՛ ը-
սեր.

— Չեմ ըսեր.

— Աստուան դէմ ալ Օրիորդ Ֆիլիֆիւը առած՝
պալքօնը քաշուեցայ. ներսէն, դուրսէն, ասդի-
էն, անդիէն խօսեցանք, հիացանք, խնդացինք
ու զուարճացանք. Շիտակը ըսելով, մարդիկը
շատ լաւ կերպով պատուասիրեցին մեզի. զիպիպ,
զինի, գօնեաք, պիրա երեսի վրայ. ամէն տե-
սակ մեղքներով զարդարուած սեղան մը. պար-
պուած պնակները անմիջապէս կը լեցուէին.

— Թերևս նպարավաճառին խանութը հոն
փոխադրած էին.

— Այդ չեմ գիտեր. բայց սա կրնամ ըսել
որ՝ առ նուազն 5 ոսկի ծախսած էին նոյն գի-
շերը.

— Բայց եղբայր, կըսէին թէ այդ ընտանի-
քը հաղիւ կրնայ ապրուիլ և խօսքը մէջերնիս.
Երբեմն աղքատախնամէն ալ կը հոգացուին եղեր.

— Այդպէս է. նախանձելի վիճակ մը չու-
նին. կըսեն թէ պարտքը մինչեւ կոկորդնին
հասած է.

— Ուրեմն ի՞նչպէս կընեն.

— Ի՞նչպէս պիտի ընեն եղբայր, տարին ան-
գամ մըն է ասիկա, զանցային յարմարելու է.
պարտք խարճ՝ անունի կամ ծնունդի տարե-
դարձի անպատճառ սուսուէ մը տալու է.

Բո՛ժ. — Ու հետեւեալ օրն ալ, անդին աս-
դին, ձեզի պէս զեղքեկներէն բանբասուելու է...

1904

ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՔ ԲՈԺՈՒԿԻ

Շար. Ասիտրդ քիտեն

Գիշերները սենեակին պատուհանները բաց ձգել խրատող հրապարակագիր մը՝ ինք ցորեկ ատեն անգամ սենեակին դուռն ու պատուհանները սրիսը սրիսը դոց պիտի պահէ։

Խանութպան մը՝ ձեռքը քիչ մնացած խումաշները Յական մէթքո կտրելով, կլորցուցած մոխրապաներու վրայ պիտի փաթթէ ու անոնցմով պիտի լեցնէ խանութին ըռամները՝ եկող գացողին աչքին թող փշելու համար։

Հարուստ ազդային մը կազանդէն իրիկունը իր մէկ չքաւոր ազգականը դռնէն վռնտելով, ինքը նոյն օրը առած 300 ոսկինոց շասիկլի նոր բայթօնը բազմած՝ վեր վար ճախա պիտի ընէ։

Պիտի տեսնենք անանկ պարկեշտ ամուսիններ որ թէև ինքզինքնին իրենց ընտանեացը հաւատարիմ կը ցուցնեն, բայց անհաւատարմութեան մէջ ետխանին ձեռք կուտան։

Յորեկները նստած ելած տեղը ալքոլամուրթեան դէմ խօսող... Ճիւղին մը՝ իրիկունները մինչև կէս գիշեր գինետուններէն դուրս չպիտի ելնէ։

Հաւկուր մը ինքզինքը Արդոս (1000 աչք ունեցող) պիտի հռչակէ։

Անանկ անակնկալներ պիտի տեսնենք ու լսենք որ մատերնիս պիտի խածնենք... փրցնելու աստիճան։

Տարեգլխէն սկսեալ մինչեւ տարեվերջ՝ ամեն կարգի արք և կանայք, ծերք և տղայք ամէն օր պիտի գոռան պիտի գոչեն. «Դրամ, դրամ եւ դարձեալ դրամ», զի սա պահեստը զմեզ յամենայն փորձութենէ. ամէն։

Վ Ի Պ Ա Թ Ե Ր Թ

Ներկայ ամսոյս (Յունուար) մէջ հրապարակ պիտի ելնէ առաջին թիւը սոյն հանդէսին, 32էջէ բաղկացած, երկու սիւնակի վրայ, գրեթէ «Բազմավէպի» ծաւալովը. որ պիտի պարունակէ սկզբնաւորութիւնը երեք վէպերու. որոնք են. —

1. Մերժուած Սէր. Պոլսական կեանքի դրուագներ. գրած է. Պ. Ե. Սրմաքէշխանեան, 2. Տրտաւներ եւ Կաշկանքի Հաւաստաններու. հեղինակութիւն Պ. Պ. Մառիօյի և Լօնէյի, 3. Խորհրդաւոր դաս մը. հեղ. Ծորթիւնէ աիւ Պօակոպէի։

Տարեկան բաժնեգինն է Եգիպտոսի համար 6 ֆր. Դիմել հետեւեալ հասցէին։

Օճնիկ Բարսեղեան

Էմրոխըռի Օրիէնքալ, Վառնա (Պոլսի)

ԶՄԻՌՆԻԱԿԱՆ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Թրիպունալի ետին՝ հօթէլ սէն Ժօրթի կից.

Ամեն տեսակ լաւ նպարտէններէ զատ. Զմիւռնիայէն բերուած ընկեր օղի, գինի, ձէք, կարագ, աճառ, տոպիւրով գոնետրփաներ, պատաստ անուշեղեն եւ օշորանկեր՝ նարինջ, բայ, քաւմ ընկոյզ եւ չում (գրգռըզ). նաեւ Արաշէհիւրի հանգաշին ջուրը որ դժուարամարտութիւնը կը դարմանէ։

Սոյն վաճառատունը կը խոստանայ իրեն դիմող յաճախորդները գոհացնել անխաղախ ապրանքներովը եւ գիներու յախաւորութեամբը։

Մեր այս ըսածը հաստատելու համար այցելութիւն մը բարական է։

10

ՏՕՔԻՕՐ ՓԱՇԱՅԵԱՆ ԽԱՆ

Խորհրդական Բժիշկ Պարսից Թագաժառանգ Իշխանին

Այս անգամ Աղեփասնորիս հաստատուած շինելով, պատի ունի յայտնելու յարգելի Հայ հասարակութեան, որ ամեն օր առաջօրէն ժամը 9-էն 12 եւ երեկոյները 3-էն 5 հիւանդներ կրկնորակ իր սան մէջ, Աթթարին փողոց թիւ 31, Մզկիթին դէմը, ներկող յարկ։

Ներքին եւ փրաքուժական հիւանդութիւններու հետ, կը դարմանէ նաեւ երախաներու հիւանդութիւնները, 15 արոյ մասնագիտական փորձառութեամբ։

Յաջող կերպով կը դարմանէ նաեւ Աժիոնա-մոյութիւնը եւ Մորժիւնաւորութիւնը, որոնց դէմ հնարած է մասնաւոր դեղ մը եւ որուն շնորհիւ Պարսիստանի մէջ հազարաւորներ անվնաս քողած են այդ մոյութիւնը։

13

Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

«Հայեղի»ի սպարանին մէջ դիտարկեցելի գնով կը սպարուին առեւտրական տներու համար ամեն լեզուէ՝ Բարիզեան վերջին դրութեամբ հետաքրքրաշարժ, պատկերազարդ եւ գունաւոր փոքրիկ ազդարարութիւններ. կը սպարուին նաեւ այցելման, հասցէտուն, հարսանեկան հրաշքազիր մահազդ, նամակազրուի, պահարան, տնակ. եւն, Ուրիշ փաղափներէ եղած յանձնարարութիւնք աչ փութով կը կատարուին։